

թեմք դայն մեր յետագայից համար: Կեանքը կնորոգուի, կենդանիք եւ մեռեալք զիրար կփոխանակեն եւ շարունակ իրարու կյաջորդեն:

Այս աշխարհի վերայ կայուն եւ հաստատուն բան մի չկայ, ամենայն բան կը փոխուի, ամենայն ինչ կմաշի, ամենայն բան կշիջանի:

ՀԱՅԿՈՐԴԻ.

ԱԶԳԱՅԻՆ

ՎԵՀԱՓՈԽ ՀԱՅՐԱՊԵՏ

Յառաջակայ Սեպտեմբեր ամսոյ վերջերում՝ Վ.ԵՀ. Հայրապետ Աղդիս ի նիւրակնեան ամառանոցէն պիտի վերադառնայ այսր ի Ս. Էջմիածին:

ԳԱՅՐԻՒԵԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Մայր Աթոռոյս Ս. Գէորգեան ձեմարանի Վերատեսուչ եւ Վրաստան - Խմերէթի վիճակին Թեմակալ - Առաջնորդ Գերապատիւ Տ. Գարբիէլ Սրբազան Արքեպիսկոպոս՝ կարճ միջոցում վիճակին միքանի կողմանց այցելելէ զինի՝ ի Տփիսուէ վերագառնալով՝ ի 22-ն ամսոյս ընդերէկս հասաւ ի Ս. Էջմիածին, եւ սկըսաւ ձեմարանի - Գլրանոցական մասին աշակերտաց լրացուցիչ քննութիւնքը կատարել, եւ բացի յայլոց՝ նաեւ յա-

ռաջակայ ուսումնական շրջանի համար կարեւոր պատրաստութիւնքը հոգալ, նոր աշակերտներ ընդունել եւ այլն, որոց մանրամասնութիւնքը՝ եթէ ծանր զբաղմունքը ներեն՝ գուցէ կյաջողմիքը յառաջակայ Սեպտեմբերեան ամսատետրակի մէջ ամփոփել՝ ինչպէս կանխաւ եւս խոստացուած է ամսագրոյս միջոցաւ:

ԳՐԻԳՈՐԻԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ Ի ԴԱՎԱ.

Ասպահանաց եւ Հնդկաստանի վիճակին Հայոց Թեմակալ Առաջնորդ եւ Մայրագոյն Նուիրակ Գեր. Տ. Գրիգորիս Սրբեպիսկոպոս Պիրմանստանէն վերադառնալով՝ ի Դաքա բնակեալ Հայոց այցելութեան գնացած էր, ուր սիրալիր ընդունելութիւն եւ համակրութիւն վայելելով մեր սիրելի եղբայրներէն, եւ ըստ հոգեւորին միսիթարելով զնոսա, միանդամայն մի քանի այլ կարեւոր խընամքները տնօրինելով՝ ի 25/27 Մայրիսի վերագարձած է ի Կալկաթա:

Վ.ԵՀ. Հայրապետի Կոնդակը ի 25/7 Մայրիսի Դաքայի Հայոց Եկեղեցում արժանաւոր հանդիսիւ կարգայուելով՝ (զոր եւ Գեր. Գրիգորիս Սրբեպիսկոպոս բացատրելով՝ եւս կարեւոր խրատներով սիրաշահելով՝) ժողովուրդն կարի շատ գոհ եղած եւ միսիթարուած է:

Ի Դաքա բնակեալ Հայոց փոքրիկ՝ բայց բարեպաշտ եւ եկեղեցաւէր Հօտն Ս. Յարութիւն անուամբ մի եկեղեցի ունի

որի 1781 թուականին կառուցեալ է, ունի մի քահանայ, եւ 23 տունէ կրազկանան (60 անձինք արական սեռէ եւ 37 իգական սեռէ - ամենն 97 հոգիք): Սոքա ամենքը եւս յաջողակ առեւտուրով եւ գործով զբազուած են, եւ գրեթէ ամեն արուեստի մէջ բաժին եւ կարողութիւն ունին: - Դպրոց չունին, որոյ համար կարգադրութիւն եղած է, բայց ոմանց հարքն եւ ոմանց մարքն մեծ խնամքով Հայերէն լեզուն եւ ընթերցանութիւնը եւ այլն կաւանդեն եւ կուսուցանեն իւրեանց որգւոց, եւ ըստ բաւականին բարենախանձ են եղած՝ ինչպէս մեր թղթակիցն կհաղորդէ: - Խսկ հանրական դաստիարակութիւնը Անգղիացւոց վարժարաններում կստանան եղել:

Երբ ծովային ճանապարհորդութիւնն բարեխառն եղանակներով կներէ, Գրիգորիս Արքեպիսկոպոսն պիտի այցելէ ի Քթափա՝ տեղւոյն մեր սիրելի եղբարքը եւս միսիթարելոյ համար՝ ինչպէս նաեւ հետղչետէ ուրիշ տեղեր եւս պիտի երթայ, որոց համար եւս ի ժամանակին կարեւոր տեղեկութիւնքը պիտի տամք ամսագրոյս միջոցաւ:

Գրիգորիս Արքեպիսկոպոսի ի Հնդկաստան կատարած այցելութիւնքն՝ Ասպահանայ վիճակին եւ դպրոցաց համար եւս ոչ սակաւ բարեպատեհ միջոցներ եւ յոյսեր պիտի ընծայեն՝ որոց հաւատարիմ նշանքն սկսած են արգէն երեւիլ:

Թէ եւ Նորին Գերազատուութիւնն բաւական զբազմունք եւ ծանր գործեր ունին: Հնդկաստան, բայց կյուսամք որի բարակածիր վութաջանութեամբ եւ

յաջողակութեամբն շուտով պիտի յաջողի աւարտել եւ վերադառնալ յևսպահան՝ չնայելով որ՝ Հնդկաստանի մեր սիրելի եղբարք եւս չկամին թողուլ իւրեանց սիրելի Առաջնորդը՝ որ շատով վերադառնայ, որոյ համար անհրաժեշտ խօսելիք ունիմք ի բարեպատեհ ժամանակի՝ մի քանի դաւաճաններուն եւս կարեւոր խրատներ ուղղելով եւ կրկին ի զգուշութիւն հրաւիրելով:

ՀԱՃԻԿ

ԽՈՐՀԻՉԵՐԵՆԻ ԸԼՇԱՑՄԱՆՑԻՆ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Մուկվայի Հայոց Գասպարեան Աղքատանոցի Խորհրդարանն՝ ըստ սովորականին՝ նոյն հաստատութեան, 1875 մի ելեւմախց հաշիւը թէ ընդարձակ հաշուեկշուով եւ թէ ի յայտարարութեանն համառօտ բովանդակութեամբ եւ բացատրութեամբ ամփոփելով ներկայացոյց Վեհ. Հայրապետի Աղքիս, եւ մեք յայտարարութենէն հետեւեալները քաղելով արժան կհամարիմք հաղորդել ի գիտութիւն մերազնէից:

Ա. — Յամին 1875 մնակէին յԱղքատանոցի անձինք ինն՝ որք ստանային զիմուլի մնունդ. այրիք՝ Թուշմալեանց, Փիրատեանց, Պապանեան, Նազարեան, Կուկուձանեանց, Կուպիկեան և Առաքելան: Ի սոցանէ Պապանեանն արձակեցաւ ստանալով ըստ աշխանազրութեան խորհրդարանիս ամսական դռան բարյիս: Խոկ ի տեղի նորա ընկալեալ եղել այլին Սախարեան: